



Կարգապահական գործ թիվ ԿԳ-14152

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2015 թվականի մայիսի 14-ի թիվ 98-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/70-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև Պալատ) խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ), նախագահությամբ Խորհրդի անդամ՝ Ալեքսանդր Սիրունյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Երվանդ Վարոսյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով պատասխանող՝ փաստաբան Սարգիս Ասլանյանին (արտոնագիր թիվ 801) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքի համաձայն 2014 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է 55.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը**

Պատասխանողի կողմից սահմանված անդամավճարը չմուծելու 2014 թվականի նոյեմբերի 18-ին վերջինիս նկատմամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի առաջին մասի 5-րդ կետի «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ եւ կարգապահական գործը հանձնվել է Խորհուրդ:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի մայիս 14-ին, ժամը՝ 18:25-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **3. Պատասխանողի բացատրությունները**

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր սույն նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն նիստին չի ներկայացել եւ բացատրություն չի տվել:

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ**

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում այն, որ 2014 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է 55.000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը, սակայն, սույն կարգապահական գործի քննության պահի դրությամբ ամբողջությամբ վճարվել է (հիմք՝ ՀՀ փաստաբանների պալատի դրամարկղի մուտքի համապատասխան անդորրագրեր):

### **5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները**

Կարգապահական գործի քննությամբ Պատասխանողին բացասական բնութագրող ապացույցներ ձեռք չեն բերվել:

### **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված՝ Անդամավճարների, մուտքի եւ այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի 17-րդ կետի համաձայն առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասի 14-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի հինգերորդ մասի 2-րդ կետով, Խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Սարգիս Ասլանյանի (արտոնագիր թիվ 801) նկատմամբ**

հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուղարկել փաստաբան Սարգիս Ասլանյանին:

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում եւ օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նիստը նախագահող

Ալեքսանդր Սիրունյան